ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Դ-Ջ/003

ք.Երևան *26.11.2015թ.*

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Մ. Մինասյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Երևանի Դավթաշեն վարչական շրջանը, ի դեմս վարչական շրջանի ղեկավար Ռ.Բաղդասարյանի, որը գործում է վարչական շրջանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Համաձայն սույն պայմանագրի՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել ծառայություն (այսուհետև՝ ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայության համար համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածով սահմանված Տեղնիկական բնութագրի պահանջների:

1.2. Ծառայության մատուցման ժամկետն է 2015 թվականի դեկտեմբերի 1-ից՝ անժամկետ:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները.

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը,

2.1.2 միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը, Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ զրավոր հայտնել Կատարողին.

2.2.2 ծառայության, արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել սույն պայմանագրի 3.1 կետում նշված գնին համապատասխան գումարը:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարը.

2.4. Կատարողը պարտավոր՝

2.4.1 սույն պայմանագրի հավելվածով սահմանված պայմաններով ապահովվել ծառայության պատշաճ որակով մատուցումը.

2.4.2 պատվիրատուի պահանջով 1 օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները.

3. Պայմանագրի գինը

3.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է 1խմ ջրի դիմաց 170,3 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ.

3.2. Պատվիրատուն Կատարողին՝ սույն պայմանագրի 3.1 կետով նախատեսված սակագնի համաձայն, յուրաքանչյուր ամսվա օգտագործված ջրի դիմաց վճարում է հաջորդ ամիս՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում.

3.3 Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով սակագների փոփոխվելու դեպքում, որի ժամանակ կգործի փոփոխված սակագինը:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ֆորս-մաժոր)

4.1. Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կայտարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. Այլ պայմաններ

5.1. Սույն պայմանագրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը.

5.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը.

5.3 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով.

5.4 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի հավելվածը կազմված է 1 էջից և հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի 1 օրինակ:

6.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայություն	Դավթաշեն վարչական շրջան
ք.Երևան, Նալբանդյան 13	Ք. Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ. վարչ. շենք
Հ/Հ 900011556355	Հ/հ 900055314109
ՀՎՀՀ 02505511	ՀՎՀՀ 02593108
ՀՀ ֆինանսների նախարարություն	Կենտրոնական զանձապետարան
գործառնական վարչություն	Դավթաշեն վարչական շրջանի
	դեկտրար Ռ. Բաղդասարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
26.11.2015թ. կնքված
N Դ-Ջ/003 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Երևանի Դավթաշեն վարչական շրջանը թույլատրում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Դավթաշեն համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնին իր խողովակից օգտվելու և դառնալու ենթաբաժանորդ: Դավթաշեն համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնը կտեղադրի ջրի հաշվիչ և պատասխանատու է իր օգտագործած ջրի վճարման համար համաձայն պայմանագրի 3.2 կետի:

Ծառայության անվանում՝ ջրամատակարարում:

Ծառայության արժեք՝ 1 խորանարդ մետրի դիմաց 170,3 ՀՀ դրամ (մեկ հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայություն	Դավթաշեն վարչական շրջան
ք.Երևան, Նալբանդյան 13	Ք. Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ. վարչ.շենք
Հ/Հ 900011556355	Հ/հ 900055314109
ՀՎՀՀ 02505511	ՀՎՀՀ 02593108
ՀՀ ֆինանսների նախարարության	Կենտրոնական գանձապետարան
գործառնական վարչություն	Դավթաշեն վարչական շրջանի
	ղեկավար՝ Ռ. Բաղդասարյան
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԹԻՎ Դ-Ջ/003 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 13 հոկտեմբեր **2023թ.**

Միասնական սոցիալական ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա.Աղաբաբյանի, ով գործում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2021 թվականի մարտի 17-ի N 37-Լ հրամանով հաստատված կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու, մի կողմից և Երևանի Դավթաշեն վարչական շրջանը, ի դեմս վարչական շրջանի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Ռ.Համբարձումյանի, ով գործում է վարչական շրջանի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, երկուստեք միասին՝ Կողմեր, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

Կողմերը համաձայնվեցին՝

1.1 2015 թվականի նոյեմբերի 26-ի Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության և Երևանի Դավթաշեն վարչական շրջանի միջև կնքված ծառայությունների վճարովի մատուցման թիվ Դ-Ջ/003 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«1.1 «Համաձայն սույն պայմանագրի՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի համաձայնությամբ մատուցել ծառայություն» (այսուհետև՝ ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայության համար՝ համաձայն իր կողմից օգտագործվող տարածքում տեղադրված ջրաչափի թվով երկու հաշվառքի սարքերի (գործարանային հ.11026063 և հ.11030133) ցուցիչների և սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Պայմանագրի 1.2 կետում «Ծառայության մատուցման ժամկետն է 2015 թվականի դեկտեմբերի 1-ից՝ անժամկետ» բառերը փոխարինել «Ծառայության մատուցման ժամկետն է 2015 թվականի դեկտեմբերի 1-ից 2023 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերով,

1.3 Պայմանագրի 3.1 կետում «Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է 1 խմ ջրի դիմաց 170.3 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ.» բառերը փոխարինել «Սույն պայմանագրով Կատարողի մատուցման

ենթակա ծառայության ամսական գին է համարվում Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման տվյալ պահին գործող սակագնի և հաշվառքի սարքի ցուցմունքի արտադրյալը.» բառերով,

1.4 Պայմանագրի հավելվածի «170.3 ՀՀ դրամ (մեկ հարյուր յոթանասունչորս), ներառյալ ԱԱՀ-ն» բառերը փոխարինել «Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման տվյալ պահին գործող սակագինը:»,

1.5 Սույն Համաձայնագիրը կնքված է համարվում ստորագրման պահից, և տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Միասնական սոցիալական ծառայություն	Դավթաշեն վարչական շրջան
Ք. Երևան, Նալբանդյան 13	Ք.Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ.
Հ/Հ 900011556355	Հ/h 900055314109
ՀՎՀՀ 02505511	ՀՎՀՀ 02593108
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի ժ/պ
Ծառայության գլխավոր քարտուղար՝	Ռ.Համբարձումյան
Ա.Աղաբաբյան	
(ստորագրություն, Կ.Տ)	(ստորագրություն, Կ.Տ)